ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

28 դեկտեմբեր 2023 թվական Արթիկ քաղաք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Գորոյան և գործընկերներ» ՍՊ ընկերության կողմից ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի Պեմզաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող տուֆերի հանքավայրերի օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների և ընդերքի օգտագործման ժամկետների վերաբերյալ հանրային քննարկումների 1-ին փուլի

Հանրային քննարկումը սկսվեց ժամը 15:00-ին:

Ներկա էին՝ Արթիկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Մակեյանը, Արթիկ համայնքի ղեկավարի օգնական Տ. Չարչյանը, Արթիկի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Ա. Պասկևիչյանը, համայնքապետարանի բաժինների պետեր, «Գորոյան և գործընկերներ» ՍՊ ընկերության ներկայացուցիչներ, Պեմզաշեն գյուղի բնակիչներ, Արթիկ համայնքի բնակիչներ:

Հանրային քննարկումը վարում էր Արթիկ համայնքի ղեկավար Ա. Ոսկանյանի կողմից լիազորված անձ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Մակեյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց հանրային քննարկման նպատակը, այն է՝ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 19.11.2014թ. <<Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին>> N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն՝ 2023 թվականի դեկտեմբերի 28-ին՝ ժամը 15:00-ին ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայքի ղեկավարի նստավայրում տեղի են ունենում «Գորոյան և գործընկերներ» ՍՊ ընկերության կողմից ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի Պեմզաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող տուֆերի հանքավայրերի օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների և ընդերքի օգտագործման ժամկետների վերաբերյալ հանրային քննարկումների 1-ին փուլը: Նա խնդրեց ներկաներին ընկերության ներկայացուցչին հղել իրենց հուզող հարցերը: Այնուհետև խոսքը փոխանցեց ընկերության ներկայացուցչին բարձրացնել իրենց հուզող հարցերը Վ. Ալոյանին, որպեսզի ինքն անձամբ ներկայացնի տարածքում նախատեսվող աշխատանքների ընթացքը:

Ելույթ ունեցան

«Գորոյան և գործընկերներ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Վ. Ալոյանը: Նա ներկայացրեց, որ իր ընկերությունը Պեմզաշենի վարչական տարածքում ցանկանում է ընդլայնել տուֆ քարի արդյունահանությունը: Արթիկի համայնքապետարանից հայցվում է մոտ 5 հա տարածք, որպեսզի ընդլայնվի հանքարդյունահանությունը: Դրանով խթանում ենք նոր աշխատատեղերի բացմանը: Նա ներկայացրեց, որ իրենց ընկերությունը բարեխղճորեն է օգտագործում ընդերքը, իսկ աշխատակիցներին վճարում է

ամենաբարձր աշխատավարձը՝ համեմատ տարածաշրջանի մյուս հանքերի: Հանքարդյունահանման ընթացքում տուֆ քարի արդյունահանման ծավալները փոքրացել են, այդ իսկ պատճառով մեր ընկերությունը հայցում է համայնքին տրամադրել մոտ 5 հեկտար տարածք՝ հանքարդյունահանությունը շարունակելու նպատակով: Բնակիչների համար շար լավ պայմաններ են ստեղծված աշխատանքի համար, բարձր վարձատրվող աշխատանք ենք առաջարկում մեր աշխատակիցներին: Հանքավայրի ընդլայնմամբ Պեմզաշենում կստեղծվեն նոր աշխատատեղեր, ինչի շնորհիվ կլուծվեն մի քանի ընտանիքի սոցիալական խնդիրները:

Հանքում պահպանված են բոլոր անվտանգության կանոնները, երթևեկության կանոնները, բոլոր նշանները՝ երթևեկությունը կանոնավոր կազմակերպելու համար, աշխատանքը կանոնակարգված, կոլեկտիվի բարոյահոգեբանական մթնոլորտը դրական է, բոլորը սիրով գալիս են աշխատանքի, բոլորը բավարարված են իրենց աշխատավարձով:

Հնչեցին հարցեր

1. Արթիկ համայնքի ղեկավարի օգնականը հարցրեց՝ որքան է հանքավայրի հեռավորությունը բնակավայրից, արդյոք պահպանված է սանիտարական գոտին:

Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց, որ հայցվող տարածքը չի խոչընդոտում համայնքի բնականոն կյանքին և գտնվում է բնակավայրից բավականաչափ հեռավորության վրա:

2. Համայնքի ղեկավարի օգնական Տ. Զարչյանը հարցրեց՝ կան արդյոք տարածքում ջրային ռեսուրսներ, ստորգետնյա ջրեր, հեղեղատարներ:

Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց, որ այդպիսի ռեսուրսներ տարածքում առկա չեն: Այդ տարածքը փակ տարածք է, անգամ ճանապարհներ տարածքի միջով չեն անցնում:

3. Նիստը վարող Վ. Մակեյանը հարցրեց՝ իրականացրել է ընկերությունն արդյոք Պեմզաշեն գյուղի վարչական տարածքում նման գործունեություն:

Այո, ընկերությունը նախկինում իրականացրել է գործունեություն, հայցվող տարածքը հենց գործունեության ընդլայնման համար է:

4. Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների բաժնի պետ Ա. Գրիգորյանը հարցրեց՝ ընկերության լեռհատկացումը քանի հեկտարի վրա է եղել, շահագործվող տարածքը ինչքան է եղել: Հարցը նրանում է, թե ինչու պիտի համայնքը նորից ընդլայնում տա: Կա արդյոք հիմնավորում, որ Ձեր պաշարները վերջացել են, կամ գուցե Ձեզ հատկացվել է 5 հա և նորից ցանկանում եք մոտ 5 հա էլ վերցնել, դրա հիմնավորումը որն է:

Վ. Ալոյանն ասաց, որ հանքը ընդլայնման տեղ չունի, այն աստիճանաբար ներքև է իջնում, տարածքը փոքրանում է, ընդլայնումը պետք է, որ տարածքում հանքի պաշարները օգտագործվեն, մեքենաներն այս վիճակով հանք չեն կարող մտնել,

հանքարդյունահանությունը շատ է դժվարանում, քանի որ արդեն 10 տարի է, ինչ հանքը շահագործվում է:

Նիստը վարող Վ. Մակեյանը և ներկաները տվեցին իրենց դրական դիրքորոշումը «Գորոյան և գործընկերներ» ՍՊ ընկերության մտադրություններին՝ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի Պեմզաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող տուֆերի հանքավայրերի օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների և ընդերքի օգտագործման ժամկետների վերաբերյալ:

Քանի որ այլ հարցեր չհնչեցին, նիստը վարող Վ. Մակեյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և փակեց նիստը:

Հանրային քննարկումն ավարտվեց 15:16-ին:

Հանրային քննարկումը վարեց՝
Արթիկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ՝ _____ Վ. Մակեյան

Արձանագրեց՝
Արթիկ համայնքի ղեկավարի օգնական՝ _____ Տ. Չարչյան

<<Գորոյան և գործընկերներ>> ՍՊԸ-ի տնօրեն՝ _____ Ա. Խաչատրյան

Կից ներկայացվում է հանրային քննարկման տեսաձայնագրությունը:

Հանրային քննարկումների մասնակիցների ցանկը կցվում է արձանագրությանը:

«Գորոյան և գործընկերներ» ՍՊ ընկերության կողմից ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի Պեմզաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող
տուֆերի հանքավայրերի օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների և ընդերքի օգտագործման ժամկետների վերաբերյալ
հանրային քննարկումների (1-ին փուլ) մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

28.12.2023 թ. ժամը 15:00-ին

Արթիկի համայնքապետարան

ՀՀ	Ֆիզիկական/իրավաբանական անձի անուն ազգանունը	Հեռախոսահամարը	Զբաղվածությունը	Ստորագրությունը
1	[illegible]	098 56 56 08	[illegible]	[illegible]
2	[illegible]	094 32 15 67	[illegible]	[illegible]
3	[illegible]	077 46 75 74	[illegible]	[illegible]
4	[illegible]	093 07 02 24	[illegible]	[illegible]
5	[illegible]	094-84-50-54	[illegible]	[illegible]
6	[illegible]	094-90-95-73	[illegible]	[illegible]
7	[illegible]	098-500-788	[illegible]	[illegible]
8	[illegible]	077711175	[illegible]	[illegible]
9	[illegible]	077333345	[illegible]	[illegible]
10	[illegible]	093344430	[illegible]	[illegible]
11	[illegible]	094-772-102	[illegible]	[illegible]
12	[illegible]	093-200-251	[illegible]	[illegible]
13	[illegible]	093 74 72 24	[illegible]	[illegible]
14	[illegible]	077753177	[illegible]	[illegible]
15	[illegible]	093353638	[illegible]	[illegible]
16				
17	[illegible]	077852021	[illegible]	[illegible]
18				
19				
20				
21				
22				
23				

05553661
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ШИРАКСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ г.АРТИКА
REPUBLIC OR ARMENIA
MARZ OF SHIRAK
MUNICIPALITY OF ARTIK

N 02
«05» 01 2024թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Հիմք ընդունելով Արթիկ համայնքում 2023 թվականի դեկտեմբերի 28-ին, ժամը 15:00-ին ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի շենքում (ՀՀ Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Ազատության հր. 1) «Գորոյան և գործընկերներ» ՍՊ-ի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Պեմզաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող տուֆերի հանքավայրերի օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների և ընդերքի օգտագործման ժամկետների վերաբերյալ հանրային քննարկումների 1-ին փուլի արդյունքները, համայնքը տալիս է իր նախնական համաձայնությունը <<Գորոյան և գործընկերներ>> ՍՊԸ-ին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքի վարչական սահմաններում իրականացնելու հանքարդյունահանման աշխատանքներ:

Տրվում է ներկայացնել պահանջվող վայր:

Արթիկ համայնքի ղեկավար Ա. Ոսկանյան